նեցուն. ոչ լինէր ծանր կալն նաև տարի մի ամբողջ, միայն գացի այլ ոմն լամպէրթին, որ ընդ իշխանս քրիստոնէից վարեցաւ խաղաղութեամբ։

Ցիրաւի ափշեցոյց զՀոմ իւրով իմաստութեամբն և խոնարհամտութեամբն և ընտանեկան կենցաղավարութեամբն, և ի վեր քան զամենայն իւրով պարզամիտ ջերմեռանդութեամբն։ Ուստի ոչ յագին հոմայեցիք օր ըստ օրէ գովաբանելոյ զնա, մանաւանդ խորհին առնել նմա պատիւս նորոգս և զարմանալիս։ Ցետ զատկիս պատրաստեցին ի պատիւ նորա լուսաւորել զկաթողիկէն սրբոյն պետրոսի, և ի բերդն առնել հրաձգութիւնս պէսպէս, ամբարձաձիգ և օդաթռիչ փամփշտովք, և ապա երկուս աւուրս ձիարշաւութիւնս կատարել ի Գոռսն, իբրև ի բարեկենդանի. և ի մեծի պատրաստութեան է վենէտիկու էլչին առնել հրապարակական ֆէստին մի ի պատիւ նորա։ Ջնոյն և գոռսին և պռաչանն և այլք։... Եթէ ոք կամիցի պատմել զարարս նորա որ ի Հոմ, և ի ճանապարհի զհաւատս գրոց պարտ է լնուլ. ուստի ձանձրոյթ լինի գրողին և լսողին։...

Լուր ինչ ի գօնգլավէն ոչ գոյ. բայց միայն զայս ասեն առ հասարակ թէ արդէն զպապն ընտրեալ են, սակայն սպասեն գալստեան այլոց գարտինալաց, այսինքն է երկուց սպանեօլից և երկուց նէմցէից և նմանեաց, առ ի հրատարակել և հաւանութեամբ նոցա. և այն է գարտինալ ստօփանին, բայց զճշմարիտն ոչ ոք գիտէ։...

Խոնարհագոյն և անարժան ծառայ
Հ. Գէորգ [Պաղտասարեան]

Գրեցաւ ի Հոմ 1769
ի մարտի 25

ՄՁԶ.

Գ.

Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Մկրտիչ վարդապետին
կարօտիւ սիրոյ ողջոյն

... Իմփէռաթոռն տակաւին ի նէապօլիս է, և կռանտուգան ի վաղուց գնաց ի Ֆիրէնցայ։ Տօրիան արար ֆէստին մի որ ոչ էր եղեալ ի Հոմ երբէք նմանն, վասն զի ի մէջ երից աւուրց զքառակուսի բակն փալացին իւրոյ դէպ ի գոռսն որ շուրջանակի ունէր զկալարիայն, բազմութեամբ գերանաց անդ անտառասարաս տնկեցելոց և հաստատելոց, հաւասարեաց յատակի փալացին, և բացեալ դրունս ի կալարիայէն միացոյց զբակն ընդ փալացին և յօրինեաց զնա իբրև մեծ ինչ սալայ, զոր զարդարեալ իսկոյն հայելեօք, և գունագոյն երանգօք և նկարօք և մետաքսեայ զարդուք և աթոռովք, արար տեղի պարելոյ և ֆէստինի, յորում ի չորս անկիւնսն բարձրացոյց և տեղի երաժշտաց, միագոյն հանդերձիւ զարդարելոց. թող զայլ ամենայն սպասսն և զպատրաստութիւնս, ուր աքանչացոյց զամենայն օտարս և զեկս։ Այսու յաղթեաց մեծութեան ֆէստինի այլոց հոմայեցւոց և վենէտիկու էլչուն։ Գօնգլավէն նոր ինչ լուր ոչ գոյ, բայց եթէ լսի թէ չփոթութիւն մեծ կայ ի մէջ Գարտինալացն մերոց և ֆրանսայու։...

Խոնարհագոյն ծառայ
Հ. Գէորգ վարդապետ անարժան

Գրեցաւ ի Հոմ 1769
ի յապրիլի 8.ին

ՄՁԷ.

Կղեմէս ԺԴ.ի Քահանայապետական ընտրութեան և անոր հրատարակութեան լուրը կը տրուի։